## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenismer@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 26-Ն

## ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ)ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի3-րդ կետով, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, <<Քաղաքաշինության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 13 և 14 հոդվածները և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը՝ համայնքի ավագանին որոշում է .

1.Հաստատել <<Վարդենիսի քաղաքային համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը>>՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԼՈՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՇՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՍՈՒՆ
9. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

Կ.Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՈԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ